# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.12.2018թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
## թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/117

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից 27.11.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ -ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 27.11.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Գործի համառոտ նկարագրությունը և փաստերը.

«ՀԱԷԿ» ՓԲԸ–ի կարիքների համար համար կենցաղային տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-160/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) 6-րդ չափաբաժնի մասով մասնակցության հայտ է ներկայացրել «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով նշված չափաբաժնով նախատեսված՝ օդորակիչ ապրանքատեսակի բնութագիրը սահմանվել է հետևյալ կերպ. GENERAL Refrigerant ֆիրմայի, R410A, model –AOG60UMAYT 400V, 50Hz, 16,5kW, կամ համարժեքը:

Մեր ընկերությունը հայտով առաջարկել է օդորակիչ HISENSE AUF60ER6SM(60H6SP1), հետևյալ տեխնիկական բնութագրով. Օդորակիչ հատակասյունային, պատի-սպլիտ

համակարգով, աշխատանքային ռեժիմը՝ հովացում և ջեռուցում: Աշխատանքային մակերեսը՝ 200 ք.մ., հզորությունը 60000 BTU, օդի շրջանառությունը 2000խմ/ժ, ջեռուցման հզորությունը 17000 բտ, սառեցման հզորությունը 16000վտ, էներգաարդյունավետության դասը՝ A: Աղմուկի մակարդակը-51 դԲԱ: Տեղադրումը և փորձարկումը՝ մատակարարի կողմից:

Գնահատող հանձնաժողովի /այսուհետև՝ Հանձնաժողով/ 16.11.2018թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած համարժեք HISENSE AUF60ER6SM(60H6SP1) օդորակիչի տեխնիկական բնութագրերի վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման եզրակացությունը ստանալու նպատակով հանձնաժողովը երկու օրով կասեցրել է նիստը, ինչից հետո, 21.11.2018թ. պատասխանատու ստորաբաժանումը հայտնել է դիրքորոշում, ըստ որի, մեր կողմից առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիրը գնահատվել է հրավերի բնութագրին չհամապատասխանող:

Հանձնաժողովը նույն արձանագրության մեջ նշել է, որ նախատեսվում է ձեռք բերել ալիքային տեսակի, սառեցման հզորությունը 16,5 kВт, ջեռուցման հզորությունը 24,8 кВт, սակայն Ընկերության կողմից առաջարկվել է սյունակային տիպի, որը արտադրական տարածքում նպատակահարմար չէ: Հանձնաժողովը նաև համացանցից ներբեռնել և արձանագրությանն է կցել պահանջվող ապրանքի տեխնիկական նկարագիրը:

Արդյունքում Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել է մեր ընկերությանը այդ ժամանակահատվածում շտկել անհամապատասխանությունը:

Համակարծիք չլինելով Հանձնաժողովի որոշման հետ՝ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն 22.11.2018թ. Հանձնաժողովին ներկայացրել է պարզաբանում-առարկություն, որում հայտնել է, որ հրավերի 6-րդ չափաբաժնում նշված և Հանձնաժողովի կողմից համացանցից ներբեռնված և արձանագրությանը կցված պահանջվող ապրանքի տեխնիկական նկարագրերը որևէ ընդհանրություն չունեն: Ընկերությունը նշել է նաև, որ պատվիրատուն նախատեսել է գնել ալիքային տեսակի օդորակիչ, սակայն հրավերում այդ մասին որևէ հիշատակում չի արվել, հրավերում նշվել է 16,5 kВт, սակայն անհասկանալի է, սառեցմանն է վերաբերում նշված ցուցանիշը, թե՝ ջեռուցմանը: Ընդ որում, հարկ ենք համարում նշել, որ Ընկերության կողմից հայտով առաջարկվել է ավելի խնայող ռեժիմով աշխատող օդորակիչ: Բացի այդ, պատվիրատուն հրավերում չի նշել օդորակիչին ներկայացվող պահանջը՝ միաֆազ, թե՝ եռաֆազ հոսանքով:

Ամփոփելով վերը նշվածը՝ ընկերությունը պնդել է, որ իր կողմից առաջարկվող ապրանքը համապատասխանում է հրավերի տեխնիկական բնութագրին:

Սակայն, 26.11.2018թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրությամբ Հանձնաժողովը որոշեց «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը համարել հրավերի պահանջներին չբավարարող և մերժել՝ թիվ 6 չափաբաժինը համարելով չկայացած:

Բողոքի իրավական հիմքերը և ապացույցները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Այսպիսով, հաշվի առնելով վերը նշվածը՝ գտնում ենք, որ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և վերջինիս հայտը 6-րդ չափաբաժնի մասով մերժելու Հանձնաժողովի որոշումը իրավաչափ չէ, կայացված է Օրենքի 13-րդ և 34-րդ հոդվածների խախտումով, քանի որ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերով Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: Ավելին, գտնում ենք, որ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված օդորակիչներն ապահովում են ավելի տնտեսող, հետևաբար՝ ավելի արդյունավետ աշխատանքային ռեժիմ, ինչը ևս օրենքով ամրագրված սկզբունք է և չպետք է անտեսվի Պատվիրատուի կողմից հայտերի գնահատման ընթացքում:

Նկատի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձին խնդրում եմ՝

1. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-160/18» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումները:

2. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-160/18» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին դադարեցնել Ընթացակարգը 6-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին որոշումը:

3. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-160/18» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի հայտը 6-րդ չափաբաժնի մասով բավարար գնահատելու մասին համապատասխան որոշում»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության ներկայացուցիչներ Քրիստինե Մնացականյանը և Անահիտ Ոսկանյանը:

**2. <u>«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից 27.11.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 03.12.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ արտադրամասերից մեկում, որտեղ հնարավոր է հատակին և պատերի վրա յուղի արտանետումներ, առաջացել է օդորակչի գնման անհրաժեշտություն: Հետևաբար, անհրաժեշտ պահանջը բավարարելու նպատակով որոշվել է գնել առաստաղին ամրացվող

տիպի օդորակիչ: Շուկայի ուսումնասիրության արդյունքում պատասխանատու ստորաբաժանումը, որպես այդպիսին առաջարկել է գնել GENERAL ֆիրմայի model–AOG60UMAYT օդորակիչը, որը սյունակային տիպի (тип колонный) օդորակիչ է:

Գնման հայտը պատրաստելիս պատասխանատու ստորաբաժանումը առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով, այն է՝ «Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը, թիվ 6 չափաբաժնի բնութագրով նախատեսվել է գնել օդորակիչ GENERAL Refrigerant ֆիրմայի, R410A, model – AOG60UMAYT 400V, 50Hz, 16,5kW, կամ համարժեքը:

«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն մասնակցելով ընթացակարգի թիվ 1, 2, 3, 4, 6, 8 և 9 չափաբաժիններին, առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել թիվ 4, 6 և 8 չափաբաժիններով, սակայն թիվ 6 չափաբաժնի համար առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով ներկայացրել է HISENSE AUF60ER6SM (60H6SP1) հատակասյունային, պատի-սպլիտ օդորակիչ:

Գնահատող հանձնաժողովը որակավորման փաստաթղթերի գնահատման 16.11.2018թ. նիստը կասեցրել է երկու աշխատանքային օրով, որպեսզի պարզի առաջարկվող HISENSE AUF60ER6SM(60H6SP1) օդորակիչը համարժեք է պահանջվող GENERAL Refrigerant ֆիրմայի, R410A, model–AOG60UMAYT օդորակչին, թե ոչ: 21.11.2018թ. ստանալով նաև պատասխանատու ստորաբաժանման դիրքորոշումը, գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ նախատեսված է գնել ալիքային տեսակի (тип канальный) օդորակիչ, սառեցման հզորությունը 16,5кВт, ջեռուցման հզորությունը 24,8 кВт, սակայն առաջարկվել է սյունակային տիպի (тип колонный), որը արտադրական տարածքում նպատակահարմար չէ, ինչպես նաև սառեցման հզորությունը 16,0кВт, ջեռուցման հզորությունը 17,0кВт և աշխատում է եռաֆազ հոսանքով:

Առաջարկվել է ՀՀ Կառավարության 04 մայիսի 2017թ. թիվ 526-Ն որոշման 47-րդ կետով սահմանված կարգով նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ին տալ հնարավորություն շտկելու անհամապատասխանությունները:

Սակայն «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն անհամապատասխանությունը շտկելու փոխարեն 22.11.2018թ. ուղարկել է գրություն, որով պնդել է, որ իր կողմից առաջարկվող սյունակային

տիպի (тип колонный) օդորակիչը պահանջվող ալիքային տեսակի (тип канальный) օդորակչի համարժեքն է:

Գնահատող հանձնաժողովը 26.11.2018թ. նիստում «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի հայտը թիվ 6 չափաբաժնով համարել է հրավերի պահանջներին չբավարարող և մերժել է, մյուս՝ թիվ 4 և թիվ 8 չափաբաժիններով հայտը գնահատել «բավարար»:

Թիվ 6 չափաբաժինը համարել է չկայացած:

«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի իրավական հիմքերը և ապացույցները մասի առաջին պարբերությամբ հղում է կատարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին, նշելով որ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Սակայն այն չի նշանակում, որ կարելի է գնել պատվիրատուի պահանջները չբավարարող, հրավերի պահանջներին անհամապատասխան ապրանք:

Երկրորդ պարբերությամբ հղում է կատարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, որի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում: Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Հրավերով սահմանվել է գնել GENERAL Refrigerant ֆիրմայի, R410A, model-AOG60UMAYT 400V, 50Hz, 16,5kW, կամ համարժեքը: GENERAL ֆիրմայի model-AOG60UMAYT օդորակիչը, սյունակային տիպի (тип колонный) օդորակիչ է, սակայն «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն ներկայացրել է HISENSE AUF60ER6SM(60H6SP1) հատակասյունային՝ պատի-սպլիտ օդորակիչ, որի պատճառով կասեցվել են 16.11.2018թ. և

21.11.2018թ. նիստերը, «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ին տալով հնարավորություն շտկելու անհամապատասխանությունները, միաժամանակ ուղարկվել է նաև պահանջվող և առաջարկվող ապրանքների համացանցից արտատպված տեխնիկական տվյալները:

Հետևաբար, գնման առարկան լիարժեք ուսումնասիրելու պարագայում հայտ ներկայացնող կազմակերպությունը պետք է պատկերացներ, որ պահանջվում է ոչ թե սյունակային տիպի (тип колонный), այլ ալիքային տեսակի (тип канальный) օդորակիչ:

Ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի բողոքը անհիմն է և ամբողջությամբ ենթակա է մերժման»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Աշոտ Ղազարյանը:

**3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/117 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից 27.11.2018թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի Բողոքի վերաբերյալ Բողոքներ քննող անձին 03.12.2018թ. գրությամբ հայտնած դիրքորոշումը, «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-160/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-160/18» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 03.11.2018թ. նիստի թիվ 3, 16.11.2018թ. նիստի թիվ 4, և 26.11.2018թ. նիստի թիվ 6 արձանագրությունները.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար կենցաղային տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-15/16-2018-3-ԴԲԳԳԿ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ Ընթացակարգի 6-րդ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրով «Օդորակիչ» ապրանքատեսակի մասով սահմանվել են հետևյալ հատկանիշները.

«GENERAL Refrigerant ֆիրմայի, R410A, model – AOG60UMAYT 400V, 50Hz, 16,5kW, կամ համարժեքը»:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ–ն՝ Ընթացակարգի 4-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով:

Հանձնաժողովի 03.11.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 8-րդ կետի համաձայն՝ «ԳՀԱՊՁԲ-15/16-2018-3-ԴԲԳԳԿ» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից 6-րդ չափաբաժնի մասով ներկայացված ընդհանուր գնային առաջարկը կազմել է 1,300,000 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության 11-րդ կետով Հանձնաժողովը որոշել է «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 4-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով:

Առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն Հանձնաժողովին է ներկայացրել Հրավերի Հավելված 6.1-ով սահմանված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հետևյալ բովանդակությամբ. «HISENSE AUF60ER6SM (60H6SP1), օդորակիչ հատակասյունային, պատի-սպլիտ համակարգով, աշխատանքային ռեժիմը՝ հովացում և ջեռուցում: Աշխատանքային մակերեսը՝ 200 ք.մ., հզորությունը 60000 BTU, օդի շրջանառությունը 2000 խմ/ժ, ջեռուցման հզորությունը 17000 բտ, սառեցման հզորությունը 16000 վտ, էներգաարդյունավետության դասը՝ A: Աղմուկի մակարդակը-51 դԲԱ: Տեղադրումը և փորձարկումը՝ մատակարարի կողմից»:

Հանձնաժողովի 16.11.2018թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 4 արաձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած համարժեք HISENSE AUF60ER6SM(60H6SP1) օդորակիչի տեխնիկական բնութագրերի վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման եզրակացությունը ստանալու նպատակով՝ հանձնաժողովի անդամներն առաջարկել են երկու աշխատանքային օրով նիստը կասեցնել:

21.11.2018թ. ստացվել է պատասխանատու ստորաբաժանման դիրքորոշումը, ըստ որի Ընկերության կողմից առաջարկված օդորակիչի տեխնիկական բնութագիրը գնահատվել է հրավերի բնութագրին չհամապատասխանող:

Նույն արձանագրությաբ Հանձնաժողովը արձանագրել է, որ նախատեսված է գնել ալիքային տեսակի (тип канальный), սառեցման հզորությունը 16,5 kВт, ջեռուցման հզորությունը 24,8 кВт, սակայն Ընկերության կողմից առաջարկվել է սյունակային տիպի (тип колонный), որը արտադրական տարածքում նպատակահարմար չէ, ինչպես նաև սառեցման հզորությունը 16,0кВт, ջեռուցման հզորությունը 17,00кВт և աշխատում է եռաֆազ հոսանքով: Արձանագրությանն են կցվել նաև համացանցից արտատպված՝ պահանջվող ապրանքի տեխնիկական տվյալները:

Վերը նշվածով պայմանավորցված՝ Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել է «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

22.11.2018թ. «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն 22.11.2018թ. Հանձնաժողովին ներկայացրել է առարկություն-պարզաբանում, որում պնդել է, որ իր կողմից առաջարկվող ապրանքը համապատասխանում է հրավերի տեխնիկական բնութագրին՝ ներկայացնելով հետևյալ հիմնավորումները. Մասնավորապես, Ընկերությունը հայտնել է, որ հրավերի 6-րդ չափաբաժնում նշված և Հանձնաժողովի կողմից համացանցից ներբեռնված և արձանագրությանը կցված պահանջվող ապրանքի տեխնիկական նկարագրերը որևէ ընդհանրություն չունեն: Ընկերությունը նշել է նաև, որ Պատվիրատուի կողմից նախատեսվել է գնել ալիքային տեսակի օդորակիչ, սակայն հրավերում այդ մասին որևէ հիշատակում չկա, հրավերում նշվել է 16,5 kW հզորության մասին, սակայն անհասկանալի է, սառեցմանն է վերաբերում նշված ցուցանիշը, թե՝ ջեռուցմանը: Ըստ Ընկերության, Պատվիրատուն հրավերում չի նշել նաև օդորակիչին ներկայացվող պահանջը՝ միաֆազ, թե՝ եռաֆազ հոսանքով: Ընկերությունն անդրադարձել է նաև այն հանգամանքին, որ իր կողմից հայտով առաջարկվել է ավելի խնայող ռեժիմով աշխատող օդորակիչ:

26.11.2018թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 6 արաձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը համարել Հրավերի պահանջներին չբավարարող և մերժել: Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է նաև նաև Ընթացակարգի 6-րդ չափաբաժինը համարել չկայացած:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ կողմերը պնդեցին Բողոքի քննության շրջանակներում հայտնած գրավոր դիրքորոշումներն ամբողջությամբ:

Պաատվիրատուի ներկայացուցիչն՝ անդրադառնալով Հանձնաժողովի կողմից Ընկերության առաջարկած ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանություններին, հայտնեց, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից առաստաղային տիպի օդորակիչի ձեռքբերման անհրաժեշտությունը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ օդորակչի գնման պահանջն առաջացել է ՓԲԸ-ի արտադրամասերից մեկի համար, որտեղ հնարավոր է հատակին և պատերի վրա յուղի արտանետումներ: Միաժամանակ, Պատվիրատուի ներկայացուցիչը նշեց, որ Ընկերության կողմից առաստաղային տիպի (тип канальный) օդորակիչ առաջարկելու դեպքում Ընկերության առաջարկած ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրված մնացյալ բոլոր

անհամապատասխանությունները Հանձնաժողովի կողմից կդիտվեին որպես ոչ էական, և, ըստ էության, Ընկերության առաջարկը Հանձնաժողովի կողմից կգնահատվեր որպես Հրավերով սահմանված բնութագրին համարժեք:

Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին տեղեկացրեց, որ Պատվիրատուի կողմից Ընթացակարգի 6-րդ չափաբաժնով նախատեսված «օդորակիչ» ապրանքատեսակի «model – AOG60UMAYT 400V» տվյալով իր կողմից համացանցում կատարվել է որոնում, ինչի արդյունքում ստացվել են ինչպես հատակի՝ սյունակային տիպի, այնպես էլ առաստաղային (ալիքային) տիպի օդորակիչների նկարներ, ինչից Ընկերության ներկայացուցիչը եզրակացրել է, որ նման մոդել պարզապես գոյություն չունի, և հիմք ընդունելով որոնման արդյունքում ստացված նկարները՝ հայտով ներկայացրել է Հրավերում նշված բնութագրին համարժեք տեխնիկական պարամետրերով օժտված՝ հատակային օդորակիչի ամբողջական նկարագիրը:

Պատվիրատուի ներկայացուցիչը պարզաբանեց, որ «400V» նշումը էլեկտրական հոսանքի լարման ցուցանիշ է, և որևէ կապ չունի «model – AOG60UMAYT» մոդելի անվանման հետ, որն արտադրվում է բացառապես ալիքային տիպի, ինչին ի պատասխան Ընկերության ներկայացուցիչը հակադարձեց, որ գրվածից ակնհայտորեն բխում է, որ «400V» նշումը վրաբերում է մոդելին, այլապես այդ նշումն էլ մնացած նշումների նման (50Hz, 16,5kW, կամ համարժեքը) մոդելի անվանումից առանձնացված կլիներ ստորակետով: Ընկերության ներկայացուցիչը հավելեց, որ տվյալ դեպքում պահանջվող ապրանքի նման տեխնիկական բնութագրի ներկայացումը տարընկալման արդյունք է, որն առաջացել է Պատվիրատուի ոչ ճծգրիտ գրառման հետևանքով և Հանձնաժողովը չպետք է դիտարկի այն որպես Ընկերության կողմից Հրավերի պահանջներին չհամապատասխանող ապրանքի բնութագիր ներկայացնելու փաստ: Ընկերության ներկայացուցիչը ընդգծեց նաև, որ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված օդորակիչներն ապահովում են ավելի տնտեսող աշխատանքային ռեժիմ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով

տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Օրենքի 34-րդ հոդվածի՝

-1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)

-32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

- 46-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

- 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ

արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

- 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի Ընթացակարգի հրավերի մաս կազմող պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանված պարամետրերին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

- Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով 6-րդ չափաբաժնով նախատեսված՝ օդորակիչ ապրանքատեսակի բնութագիրն ունի «GENERAL Refrigerant ֆիրմայի, R410A, model –AOG60UMAYT 400V, 50Hz, 16,5 kВт, կամ համարժեքը» բովանդակությունը:

- Պատվիրատուն կողմից հրապարակված հրավերի տեխնիկական բնութագիրը չի պարունակում որևէ նշում այն մասին, թե ինչ տիպի օդորակիչ է Պատվիրատուն նախատեսել ձեռք բերել՝ ալիքային, թե՝ սյունակային, Հրավերում նշվել է 16,5 kВт, սակայն չի նշվել, սառեցմանն է վերաբերում նշված ցուցանիշը, թե՝ ջեռուցմանը: Հրավերում չի նշել նաև, թե օդորակիչն աշխատելու է միաֆազ, թե՝ եռաֆազ հոսանքով:

- ըստ Պատվիրատուի ներկայացուցչի հայտնած դիրքորոշման՝ բացառությամբ Ընկերության կողմից առաջարկված օդորակիչի տիպի՝ առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրված մնացյալ բոլոր անհամապատասխանությունները Հանձնաժողովի կողմից կդիտվեին որպես ոչ էական, և Ընկերության առաջարկը Հանձնաժողովի կողմից կգնահատվեր որպես Հրավերով սահմանված բնութագրին համարժեք:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընթացակարգի Հրավերի տեխնիկական բնութագիրը Պատվիրատուի կողմից չի սահմանվել բավարար ճշգրտությամբ և մանրամասնությամբ, բացի այդ, դրանում առկա՝ «model –AOG60UMAYT 400V» գրառումը

Ընկերության կողմից դիտարկվել է որպես օդորակիչի մոդելի ամբողջական անվանում, ինչը հանգեցրել է վերջինիս կողմից «model –AOG60UMAYT 400V» համացանցային որոնման արդյունքում ստացված տվյալների հիման վրա առաջարկվող ապրանքի ներկայացմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ բողոքներ քննող անձը

# Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից 27.11.2018թ ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին 22.11.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-160/18» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումները դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

3. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-160/18» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել՝ Ընթացակարգը 6-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

4. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-160/18» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով բավարար գնահատելու մասին համապատասխան որոշում»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

**ՀՀ գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝**

**ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**